ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-15) 52-85-21

« 25 » հուլիսի 2024թ.

№ ԱՍ/34.3-Մ4-9/3433-2024

«Էներջի Սփփլայ» ՍՊԸ-ի
տնօրեն Ստեփան Վիրաբյանին

Հարգելի պարոն Վիրաբյան,

Ձեզ է ուղարկվում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 24-ի «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ նախազգուշացում կիրառելու մասին» №248-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 18 էջ:

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Signed by: SAFARYAN ARTUR 2401750053

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Հ. Ադամյան ☎ (015) 58-08-08 (358)

600.0248.24.07.24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2024 թվականի №248-Ա

«ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Շուկայի օպերատոր) կողմից էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի (այսուհետ՝ ԷՄՇ) մասնակիցների պրոֆիլներում ամրագրված սպառման կետերի հզորությունների վերաբերյալ ըստ ամիսների Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացվող տեղեկատվության վերլուծության շրջանակում անհրաժեշտություն է առաջացել պարզել էլեկտրական էներգիայի մատակարարման լիցենզիա ունեցող անձանց՝ «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերության, «Էներջի Պրովայդեր», «Էներջի Սփփլայ» և «Էներջի Փաուեր Ֆլոու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (այսուհետ՝ Մատակարար կամ Մատակարարներ) հաշվեկշռման խմբում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների մեծությունների համապատասխանությունը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ՀԷՑ) կողմից հաստատված հզորությունների մեծություններին,

2) Հանձնաժողովի 2024 թվականի մարտի 5-ի №ՍԱ/34.3-Մ4-5/913-2024 գրությամբ ՀԷՑ-ից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն 2023 թվականի ապրիլի 1-ից ԷՄՇ մասնակիցների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի՝ ՀԷՑ-ի կողմից հաստատված հզորությունների փոփոխությունների դիմաց Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական շուկայի

բաշխման ցանցային կանոնների 229-րդ կետի համաձայն գանձված միացման վճարների վերաբերյալ,

3) ՀԷՑ-ը 2024 թվականի մարտի 14-ի №ԴԳ1630 գրությամբ ներկայացրել է տեղեկատվություն առ այն, որ 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև գրության ներկայացման ժամկետը ԷՄՇ մասնակիցների պրոֆիլներում ամրագրված հզորությունների փոփոխությունների դիմաց ԷԲՑ կանոնների 229-րդ կետի համաձայն գանձվել է միացման վճար միայն «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունից՝ հզորությունը 1667 ԿՎԱ-ից 1889 ԿՎԱ ավելացնելու համար (նոր տեխնիկական պայմաններ՝ ՏՊ-670/1-110/0002 առ 2024 թվականի փետրվարի 2)՝ միաժամանակ նշելով, որ դեռևս 2023 թվականի մայիսի 31-ին Շուկայի օպերատորի կողմից շուկայի կառավարման ծրագրի (այսուհետ՝ ՇԿԾ) միջոցով ներկայացվել է տեղեկատվություն որոշ սպառողների («Ռադիո», «Տելեկոմ Արմենիա» բաժնետիրական ընկերություններ, «Ավտոգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ավտոգազ-1», «Ավտոգազ-4», «Ավտոգազ-5» և «Ավտոգազ-6» սպառողներ, «Գրանդ Մաստեր», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Մասիս Տոբակո», «Կելլի և Վիլիամս», «Յունիոն», «Վահեթ», «Գուրգեն Դավթյան», «Ա. Ավետյանի ԱՍԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) հզորությունների ավելացման վերաբերյալ, որին ի պատասխան ՀԷՑ-ի կողմից ՇԿԾ-ով ներկայացվել է մերժում՝ հիմք ընդունելով ԷԲՑ կանոնների 229-րդ կետը, մինչդեռ Շուկայի օպերատորի կողմից այն այդպես էլ արձագանք չի ստացել, և ԷՄՇ մասնակիցների պրոֆիլներում փոփոխությունները կատարվել են առանց համապատասխան վճարների գանձման,

4) Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 2-ի №ՍԱ/34.3-Ղ4-4/1341-2024 գրությամբ ՀԷՑ-ին է ներկայացվել ԷՄՇ մասնակից Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների ցանկը՝ ՇԿԾ-ում գրանցված վերջիններիս սպառման համակարգերի հզորությունների մեծությունների նշումով՝ հայցելով հաստատել դրանց համապատասխանությունը ՀԷՑ-ի կողմից հաստատված (համաձայնեցված) հզորությունների մեծություններին կամ անհամապատասխանության դեպքում ներկայացնել տեղեկատվություն այդ մասով,

5) ՀԷՑ-ը 2024 թվականի ապրիլի 10-ի №Ե-949-24 գրությամբ տեղեկացրել է, որ 2023 և 2024 թվականների ընթացքում ԷՄՇ մասնակիցների հզորությունների մեծությունների փոփոխությունները ՀԷՑ-ի հետ չեն համաձայնեցվել, բացառությամբ՝ «Արարատ ցեմենտ» (29

ՄՎտ) և «ԷԿՈՍ» փակ բաժնետիրական ընկերությունների (1,7 ՄՎտ): Ավելին, «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Մասիս Տոբակո», «Գրանդ Մաստեր» և «Կելլի և Վիլիամս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների՝ ԷՄՇ-ում համապատասխան հզորություններով գրանցվելուց հետո Շուկայի օպերատորի կողմից հզորությունների փոփոխությունների վերաբերյալ ներկայացված ակցեպտները ՀԷՑ-ի կողմից մերժվել են,

6) ՀԷՑ-ը, ի լրումն իր 2024 թվականի ապրիլի 10-ի №Ե-949-24 գրության, 2024 թվականի ապրիլի 12-ի №Ե-1025-24 և ապրիլի 25-ի №Ե-1256-24 գրություններով Հանձնաժողով է ներկայացրել Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ ինչպես էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատված դուրս գալու, այնպես էլ տեղեկատվության ներկայացման պահի դրությամբ,

7) Շուկայի օպերատորի կողմից ՇԿԾ-ում ամրագրված՝ Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների մեծությունները տարբերվում են ՀԷՑ-ի կողմից Հանձնաժողով ներկայացված համանուն տեղեկատվությունից, Հանձնաժողովը ԷՄՇ մասնակից Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների փոփոխությունը Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523-Ն որոշմամբ հաստատված՝ մինչև 2024 թվականի հուլիսի 8-ը գործող խմբագրությամբ՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոններին (այսուհետ՝ ԷԲՑ կանոններ) և Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №517-Ն որոշմամբ հաստատված՝ մինչև 2024 թվականի հուլիսի 8-ը գործող խմբագրությամբ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններին (այսուհետ՝ ԷՄԱ կանոններ), ինչպես նաև ՇԿԾ-ում վերջիններիս՝ որպես Մատակարարի սպառող գրանցումը Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №516-Ն որոշմամբ հաստատված՝ մինչև 2024 թվականի հուլիսի 8-ը գործող խմբագրությամբ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններին (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ 2024 թվականի ապրիլի 30-ից հարուցել է վարչական վարույթ,

8) հարուցված վարչական վարույթի, ինչպես նաև վարույթի շրջանակում լսված լինելու իրավունքի իրացման վերաբերյալ՝

➢ Շուկայի օպերատորը ծանուցվել է Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի №ԳԲ/34.3-Ղ4-4/1736-2024 գրությամբ,

➢ «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությունը և վերջինիս հաշվեկշռման խմբում ընդգրկված սպառողներ՝ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ», «ԱԼԻՍ 1», «Ավտոգազ-6», «ԱՎԱԼԱՆԺ», «Դարոյնք», «ՖՐԵԶ ՖԻՇ», «Մ ՖԻՇ», «ՄԵՐԱՐԱ», «ՊԱՐ-ԱՐՏ», «ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱԼԿՈ», «ՇԻՆՊԼՅՈՒՍ», «ՇԻՆԱՍ», «ՍՈՒԼԱՎԱ-Տ.Ա.Ս.», «ՏԱ ԳԱԶ», «ՏՐԱՆՍ ԳԱԶ», «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ», «ԷՎ-ՎԱ», «Կելլի և Վիլիամս», «Ավտոգազ-1», «ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» («Հերմոն» սպառող), «Յունիոն» և «Մեղրաձոր Գոլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունը, «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ», «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵԶՈՒՐ» և «Ռադիո» փակ բաժնետիրական ընկերությունները, «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» Հայաստան Հիմնադրամը և անհատ ձեռնարկատեր Կարինե Լևոնի Քոչարյանը ծանուցվել են Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի համապատասխանաբար՝ №ԳԲ/34.3-Մ4-9/1774-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1772-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1737-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1828-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1744-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1756-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1751-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1753-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1784-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1767-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1779-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1781-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1771-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1780-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1777-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1749-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1757-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1738-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1776-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1778-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1766-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1775-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1770-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1746-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1747-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1773-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1783-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1768-2024, «ԼԻԼ ՖԻՇ», «ԴՈԼՈՄԻՏԻ», «Սանսա», «Մասիս Տոբակո», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Գրանդ Մաստեր», «Ավտոգազ-5», «Ավտոգազ-4», «Գնոմոն», «Մաքս Ֆիշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, «Պլատինում Սթոուն» և «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունները՝ Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 2-ի համապատասխանաբար՝ №ԳԲ/34.3-Մ4-9/1827-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1830-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1829-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1787-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1791-2024, №ԳԲ/34.3-Մ2-

23/1792-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1786-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1785-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1789-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1794-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1831-2024 և №ԳԲ/34.3-Մ4-9/1832-2024 գրություններով,

- «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և վերջինիս հաշվեկշռման խմբում ընդգրկված սպառողներ «Ա. Ավետյանի ԱՍԱ», «Մետրոպոլ» և «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները, «Արշալույս» և «Էս Ջի Այ Ինվեստ» բաց բաժնետիրական ընկերությունները, «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, «Ջրառ» և «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» («Կոկա-Կոլա» սպառող) փակ բաժնետիրական ընկերությունները, Համլետ Աշխբաբյանը և «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերությունը ծանուցվել են Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 2-ի համապատասխանաբար՝ №ԳԲ/34.3-Մ4-9/1822-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1801-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1802-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1823-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1826-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1799-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1824-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1803-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1806-2024, №ԳԲ/34.3-Մ4-9/1800-2024 գրություններով,

- «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և վերջինիս հաշվեկշռման խմբում ընդգրկված սպառողներ «Արարատ ցեմենտ», «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» («Հարարատ Կապան» սպառող), «Յուքոմ», «ՆԱՏՖՈՒԴ» և «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ փակ բաժնետիրական ընկերությունները, «Վահեթ», «ՍԻԹԻ» («Սիթի Կոմիտաս» սպառող), «Երևան Մոլլ», «Ավտոգազ», «777 Տերմինալ» և «Ֆիրմա Նյու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները ծանուցվել են Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 2-ի համապատասխանաբար՝ №ԳԲ/34.3-Մ2-23/1795-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1798-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1815-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1809-2024 և №ԳԲ/34.3-Մ4-9/1799-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1811-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1817-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1807-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1816-2024, №ԳԲ/34.3-Մ2-23/1813-2024 և №ԳԲ/34.3-Մ2-23/1812-2024 գրություններով,

- «Էներջի Փաուեր Ֆլոու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և վերջինիս հաշվեկշռման խմբում ընդգրկված սպառող «Գուրգեն Դավթյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ծանուցվել են Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 2-ի №ԳԲ/34.3-Մ4-9/1834-2024 գրությամբ,

9) «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից «ԱՎԱԼԱՆԺ», «Մ ՖԻՇ», «ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» («Հերմոն» սպառող), «ԼԻԼ ՖԻՇ», «Մետրոպոլ», «ՍԻԹԻ», «Մաքս Ֆիշ», «Ալիս 1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին և «Էս Ջի Այ Ինվեստ» բաց բաժնետիրական ընկերությանը վարչական վարույթի ծանուցման վերաբերյալ ուղարկված գրությունները 2024 թվականի մայիսի 15-ից մինչև հունիսի 24-ն ընկած ժամանակահատվածում վերադարձվել են Հանձնաժողով՝ №ԳԲ/34.3-Մ2-23/1778-2024 գրության («ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) պարագայում՝ «Տեղափոխված» նշումով, №ԳԲ/34.3-Մ4-9/1751-2024 («Մ ՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն), №ԳԲ/34.3-Մ4-9/1827-2024 («ԼԻԼ ՖԻՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) և №ԳԲ/34.3-Մ2-23/1794-2024 («Մաքս Ֆիշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) գրությունների պարագայում՝ «Անհայտ» նշումով, իսկ մնացած 5 ընկերությունների դեպքերում՝ «Չի պահանջվել» նշումով և հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասը և Հանձնաժողովի նախագահի 2018 թվականի ապրիլի 26-ի N179-ՀՆ հրամանը՝ նշված ընկերություններին ուղարկված թղթակցությունը հրապարակվել է http://www.azdarar.am կայքէջում և Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի «Տեղեկատվություններ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում,

10) Շուկայի օպերատորը 2024 թվականի մայիսի 17-ի №177ԳՂ գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ նշելով, որ դեռևս 2022 թվականի օգոստոսի 23-ին, երբ էներգահամակարգի ընկերություններին ներկայացվել են ԷՄՇ կանոններում և հաղորդման ցանցային կանոններում փոփոխությունների և լրացումների նախագծերը, Շուկայի օպերատորի կողմից սեպտեմբերի 1-ի №284ՆՀ, ավելի ուշ նաև սեպտեմբերի 23-ի №306ՄՄ գրությունների առդիրներով ներկայացվել են դիտարկումներ, որոնցով առաջարկվել է հստակեցնել, թե որ փաստաթղթով ամրագրված հզորության մեծության մասին է խոսքը, այլ կերպ ասած հստակեցնել ԷՄՇ մասնակցի՝ իր ներքո գտնվող սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորությունը. հիմնավորող փաստաթղթի անվանումը՝ ընդգծելով, որ առաջարկի կարևորությունը բխում էր ԷՄՇ մասնակիցների գրանցման գործընթացի կազմակերպման հստակեցման, փաստաթղթերի կազմի մատնանշման և անվրեպ իրականացման նկատառումներից: Միաժամանակ, Շուկայի օպերատորի կողմից ներկայացված

պարզաբանման համաձայն՝ ՇԿԾ-ում ԷՄՇ մասնակիցների գրանցման ժամանակ՝ որպես փաստաթուղթ, ընդունվել է սպառողի կողմից ներկայացված հզորության չափաքանակի վերաբերյալ էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի (հրապարակային օֆերտա) ակցեպտը, որի օրինակելի ձևում չի երևում պայմանագրի մյուս կողմի՝ բաշխողի հաստատումը: Միաժամանակ, ԷՄՇ կանոնների փոփոխությունների հերթական փուլում գրանցման տեղեկատվության հավաստիության և սահմանված ժամկետներում իրագործման նպատակով Շուկայի օպերատորի կողմից առաջարկվել է բաշխողին հարցում կատարել բազմաթիվ տեղեկատվությունների հետ միաժամանակ նաև ակտիվ հզորության մեծության վերաբերյալ, որի մասով համապատասխան դրույթն ուժի մեջ մտավ 2023 թվականի դեկտեմբերի 1-ից: Ուստի, մինչ այդ ժամանակահատվածը գրանցման գործընթացն իրականացվել է՝ հիմք ընդունելով պայմանագրի ակցեպտը՝ միակողմանի հաստատմամբ: Գրանցված սպառման կետի ակտիվ հզորության հետագա փոփոխություններն իրականացվել են ԷՄՇ կանոնների 247-րդ կետի համաձայն՝ Շուկայի օպերատորի իրավասությունների շրջանակում: Բացի այդ, կանխատեսելով ակտիվ հզորությունների չափաքանակների չարաշահման վտանգը, Շուկայի օպերատորի կողմից ԷՄՇ կանոնների փոփոխությունների վերաբերյալ Հանձնաժողովի հետ համատեղ քննարկումների ժամանակ բազմիցս առաջարկվել է ԷՄՇ կանոնների 247-րդ կետում կատարել համապատասխան փոփոխություն՝ ակտիվ հզորությունների մեծությունները փոփոխելու համար ստանալ բաշխողի համաձայնությունը,

11) «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերության սպառողներ՝

- «ԱԼԻՍ 1», «Ավտոգազ», «Դարոյնք», «ԴՈԼՈՄԻՏԻ», «ԷՎ-ՎԱ», «ՖՐԵԶ ՖԻՇ», «Գնոմոն», «Գրանդ Մաստեր», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Կելլի և Վիլիամս», «Մասիս Տոբակո», «Մեղրաձոր Գոլդ», «ՊԱՐ-ԱՐՏ», «Սանսա», «ՏՐԱՆՍ ԳԱԶ», «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ», «Մ ՖԻՇ», «ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» («Հերմոն» սպառող) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ», «Պլատինում Սթոուն», «Ռադիո», «Վիվա Արմենիա» և «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերությունների, «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» Հայաստան Հիմնադրամի, անհատ ձեռնարկատեր Կարինե Լևոնի Քոչարյանի, «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության 2024 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողով մուտքագրված

գրություններով ներկայացվել են ՀԷՑ-ի հետ կնքված էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրերը՝ որպես վերջիններիս սպառման համակարգերի էլեկտրական ցանցին միացման հիմնավորող փաստաթուղթ, միաժամանակ տեղեկացնելով, որ ՇԿԾ-ում և ՀԷՑ-ի հաշվառման քարտերում գրանցված հզորությունների մեծությունների տարբերության վերաբերյալ պարզաբանում կներկայացնի վերջիններիս մատակարար ընկերությունը,

➢ «Յունիոն», «Մաքս Ֆիշ», «ԼԻԼ ՖԻՇ», «ՄԵՐԱՐԱ», «ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱԼԿՈ», «ՍՈՒԼԱՎԱ-Տ.Ա.Ս.», «ԱԲՈՒ-ԼԱԼԱ», «ՇԻՆՊԼՅՈՒՍ», «ՏԱ ԳԱԶ», «ՇԻՆԱՍ», «ԱՎԱԼԱՆԺ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից խնդրո առարկա հարցի վերաբերյալ պարզաբանումներ չեն ներկայացվել Հանձնաժողով,

12) «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպառողներ՝

➢ «ՍՊԱՅԿԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, «Ջրառ» և «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» («Կոկա-Կոլա» սպառող) փակ բաժնետիրական ընկերությունները, «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերությունը և «Արշալույս» բաց բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մայիսի 10-ից մինչև մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում գրություններ են ներկայացրել Հանձնաժողով՝ նշելով, որ ՇԿԾ-ում և ՀԷՑ-ի հաշվառման քարտերում գրանցված հզորությունների մեծությունների տարբերության վերաբերյալ պարզաբանում կներկայացնի վերջիններիս մատակարար ընկերությունը,

➢ «Էս Ջի Այ Ինվեստ» բաց բաժնետիրական ընկերության, «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ փակ բաժնետիրական ընկերության, «Ա. Ավետյանի ԱՍԱ», «Մետրոպոլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների և Համլետ Աշխբաբյան սպառողի կողմից խնդրո առարկա հարցի վերաբերյալ պարզաբանումներ չեն ներկայացվել Հանձնաժողով,

13) «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սպառողներ՝

➢ «Արարատ ցեմենտ» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մայիսի 16-ի №Տ-01/344 գրությամբ նշել է, որ էլեկտրական էներգիայի մատակարարման հետ կապված իրավահարաբերությունները փաստաթղթային ամրագրում են ստացել օրենսդրությամբ

սահմանված կարգով, մասնավորապես, «Արարատ ցեմենտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2023 թվականի մարտի 22-ին ՀԷՑ մուտքագրված №Տ-01/185 գրության հիման վրա հաստատված ակցեպտով իրականացվել է օգտագործվող հզորության փոփոխություն և 22500 կՎտ-ի փոխարեն սահմանվել է 29000 կՎտ, միաժամանակ տեղեկացնելով, որ ընկերությունը նշված դիմումի ներկայացման պահին գործող օրենսդրական կարգավորումներին համապատասխան ամբողջ ծավալով կատարել է իր պարտավորությունները: ՇԿԾ-ում ամրագրված հզորությունից ՀԷՑ-ում գրանցված հզորության տարբերության մասով ընկերությունը նշել է, որ, առանց հիմնավորող փաստաթղթերին ծանոթանալու՝ չի կարող ներկայացնել պարզաբանում,

- «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մայիսի 14-ին Հանձնաժողով ներկայացված №1158 գրությամբ նշել է, որ հարուցված վարույթի շրջանակում անհրաժեշտ տեղեկատվությունը կտրամադրի վերջինիս մատակարար ընկերությունը,
- «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, «ՆԱՏՖՈՒԴ», «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» («Չաարատ Կապան» սպառող) փակ բաժնետիրական ընկերությունների, «ՍԻԹԻ» («Սիթի Կոմիտաս» սպառող), «Երևան Մոլլ», «ՎԱՀԵԹ», «Ավտոգազ» (Հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 2-ի №ԳԲ/34.3-Մ2-23/1816-2024 գրության մասով), «777 Տերմինալ» և «Ֆիրմա Նյու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից Հանձնաժողով պարզաբանումներ չեն ներկայացվել,

14) սպառող «Գուրգեն Դավթյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասով Հանձնաժողով պարզաբանում է ներկայացրել վերջինիս մատակարարը («Էներջի Փաուեր Ֆլոու» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն)՝ նշելով, որ ԷՄԱ կանոնների 50-րդ կետով նախատեսված պայմանագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել ոչ սպառողի, ոչ մատակարարի կողմից՝ փոխարենն առաջնորդվելով ԷՄՇ կանոնների 247-րդ կետի պահանջներով՝ ՇԿԾ-ում իրենց պրոֆիլում ամրագրված հզորության փոփոխության նպատակով դիմել են Շուկայի օպերատորին,

15) «Էներէքս» փակ բաժնետիրական ընկերությունը 2024 թվականի մայիսի 13-ի №01-05/13 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ տեղեկացնելով, որ ԷՄՇ կանոնների 247-րդ կետի համաձայն՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության արժեքի որոշման

նպատակով ընկերությունը պարբերաբար Շուկայի օպերատորին ներկայացրել է իր հաշվեկշռման խմբում գտնվող յուրաքանչյուր առանձին սպառման համակարգերի օգտագործվող հզորությունները, որոնց հիման վրա ՇԿԾ-ի՝ Մատակարարի պրոֆիլում կատարվել են համապատասխան փոփոխություններ,

16) «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի մայիսի 10-ի №ԷՊ-024 գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ տեղեկացնելով, որ իր հաշվեկշռման խմբում գտնվող «Մետրոպոլ» և «ՍՊԱՅԿԱ» («Սպայկա Նորագավիթ») սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերության, «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» («Կոկա-Կոլա» սպառող), «Ջրառ» և «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ փակ բաժնետիրական ընկերությունների, «Արշալույս» բաց բաժնետիրական ընկերության և Համլետ Աշխբաբյան սպառողի՝ ՇԿԾ-ում ամրագրված հզորությունների փոփոխություններն իրականացվել են ԷՄՇ կանոնների 247-րդ կետի համաձայն՝ սպառողների՝ ԷՄՇ դուրս գալու պահից սկսած մեկ տարվա ընթացքում: Միաժամանակ, ընկերությունը ներկայացրել է վերոնշյալ սպառողների կողմից ՀԷՑ ներկայացված էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի ակցեպտների պատճենները, սպառողների՝ ՇԿԾ-ում ամրագրված և ՀԷՑ հաշվառման քարտերում գրանցված հզորությունների տարբերության մասով տեղեկացնելով, որ ընկերությունը տիրապետում է ՇԿԾ-ում ամրագրված հզորության տվյալներին, որոնց համար հիմք է հանդիսացել վերջինիս կողմից ՇԿԾ-ի դիմումների կառավարման հարթակի միջոցով ներկայացված դիմումները, որոնց էլ կից ներկայացվել են սպառողների կողմից ստորագրված և կնքված ակցեպտները: Հաշվի առնելով նշվածը և այն հանգամանքը, որ «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կամ վերջինիս խմբում ընդգրկված սպառողները ՀԷՑ-ից չեն ստացել առարկություններ կամ հզորության փոփոխության հետ կապված վճարումների վերաբերյալ հաշվարկային փաստաթղթեր, ընկերության կողմից ենթադրվել է, որ եթե նշված փոփոխությունների վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել, ապա դրանք ընդունվել և ամրագրվել են նաև ՀԷՑ-ի կողմից: «Էներջի Պրովայդեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ներկայացված պարզաբանմամբ տեղեկացրել է, որ ՇԿԾ-ի՝ դիմումների կառավարման հարթակում

ներկայացված №R23020037 դիմումին ի պատասխան՝ ստացել է ՀԷՑ-ի 2023 թվականի հունվարի 31-ի №ԴԳ444 գրությունը, որով «Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրվել է համաձայնություն պայմանագրային հզորության նվազեցմանը՝ ի պատասխան «Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունվարի 17-ի №23/ԻԴ010001 գրության, առ այն, որ վերջինիս դրվածքային հզորությունը ժամանակավորապես նվազեցվի, հետագայում նախկին արժեքին վերականգնելու պայմանով, ինչի հիման վրա էլ՝ 2023 թվականի դեկտեմբեր ամսին «Սպայկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դրվածքային հզորությունը 8 ՄՎտ-ով վերականգնելու ակցեպտ է ներկայացվել, ինչին ՀԷՑ-ի կողմից առարկություն չի տրվել, և հզորության ավելացման համար վճարման հաշիվ չի ներկայացվել:

17) «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի մայիսի 3-ի գրությամբ ներկայացրել է իր պարզաբանումները՝ տեղեկացնելով, որ «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և վերջինիս խմբում ներառված սպառողների միջև առկա բոլոր փաստաթղթերը կազմվել են ԷՄԱ կանոնների 50-րդ կետի պահանջներին համապատասխան՝ միաժամանակ ներկայացնելով էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի ակցեպտները: Սպառողների՝ ՇԿԾ-ում ամրագրված և ՀԷՑ-ի քարտերում գրանցված հզորությունների տարբերության մասով «Էներջի Սփփլայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայտնել է, որ որևէ տեղեկություն այդ մասով ընկերության և վերջինիս հաշվեկշռման խմբում գտնվող սպառողների մոտ առկա չէ,

18) ԷՄՇ կանոնների 2-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ Մատակարարները ԷՄՇ մասնակիցներ են,

19) ԷՄՇ կանոնների 61-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերի համաձայն՝ ԷՄՇ-ին մասնակցելու նպատակով Մատակարարը ՇԿԾ-ում գրանցման հայտ բացելիս, ի թիվս այլ տեղեկատվությունների և փաստաթղթերի, ներկայացնում է տեղեկատվություն նաև սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորության վերաբերյալ,

20) ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ԷՄՇ մասնակիցը ՇԿԾ-ում գրանցման հայտ բացելիս, կցում է նաև ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ ստանձնելու դեպքում՝ իր կամ իր խմբի ներքո գտնվող սպառման համակարգի (համակարգերի) էլեկտրական

ցանցին միացման ակտիվ հզորությունը հիմնավորող փաստաթուղթը (հիմնավորող փաստաթղթում միայն լրիվ հզորության մեծությունն ամրագրված լինելու դեպքում ակտիվ հզորությունը որոշվում է լրիվ հզորության և հզորության գործակցի՝ cosφ-ի (գործակցի մեծությունը տրված չլինելու դեպքում՝ 0,8-ի) արտադրյալով),

21) ԷՄՇ կանոնների 65-րդ կետի համաձայն՝ Շուկայի օպերատորը ՇԿԾ-ում գրանցման հայտ ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է հայտի ամբողջականությունը և համապատասխանության դեպքում՝ ներկայացնում է այն էլեկտրական էներգիայի բաշխողին,

22) ԷՄՇ կանոնների 89-րդ կետի համաձայն՝ ԷՄՇ մասնակիցը պարտավոր է Շուկայի օպերատորին ծանուցել իր էլեկտրոնային վիրտուալ քարտում առկա տեղեկատվության անճշտությունների կամ տեղի ունեցած փոփոխությունների մասին: Շուկայի օպերատորը վիրտուալ քարտում փոփոխությունները կատարում է կամ դրանց կատարումը մերժում է՝ ղեկավարվելով ԷՄՇ կանոնների 65-րդ և 66-րդ կետերով,

23) ԷՄՇ կանոնների 92.1-ին կետի համաձայն՝ մատակարարի դեպքում վերջինիս էլեկտրոնային վիրտուալ քարտը պարունակում է նաև տեղեկատվություն սպառման համակարգի էլեկտրական ցանցին միացման հզորության, ինչպես նաև էլեկտրական ցանցին միացման մեկից ավելի հաշվառման կետերի դեպքում՝ յուրաքանչյուր հաշվառման կետում հզորության վերաբերյալ,

24) ԷՄՇ կանոնների 176.3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության արժեքի որոշման նպատակով՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակցի (բացառությամբ երաշխավորված մատակարարի) յուրաքանչյուր առանձին սպառման համակարգի ակտիվ հզորության (առանց պահուստային միացումների հզորությունները) մեծությունն ընդունվում է տվյալ սակագնային տարվա սկզբում ԷՄՇ առևտրի մասնակցի պրոֆիլում տվյալ սպառման համակարգի համար ամրագրված մեծությանը հավասար, որը տվյալ սակագնային տարվա ընթացքում ենթակա չէ փոփոխման, բացառությամբ՝ նույն կանոնների 247-րդ կետով նախատեսված դեպքերի,

25) ԷՄՇ կանոնների 247-րդ կետի համաձայն՝ ՀՊԿԻ, ՀՊԿԽ կամ ՀՊԿԼ կարգավիճակ և սպառման համակարգ ունեցող ԷՄՇ առևտրի մասնակիցները (բացառությամբ երաշխավորված մատակարարի) կարող են դիմել շուկայի օպերատորին իրենց պրոֆիլներում ամրագրված յուրաքանչյուր առանձին սպառման այն համակարգերի՝ ԷՄՇ կանոնների 176.3-րդ կետի 1-ին

ենթակետում նշված ակտիվ հզորությունների մեծությունները փոփոխելու համար, որոնց մասով սպառողները առաջին անգամ են ստացել որակավորված սպառողի կարգավիճակ կամ ԷՄԱ կանոնների համաձայն ընտրել մատակարար՝ որակավորված սպառողի կարգավիճակ ստանալու կամ մատակարար ընտրելու ամսվանից սկսած մեկ տարվա ընթացքում,

26) սպառողի սպառման համակարգի առավելագույն թույլատրելի հզորության ամրագրումը նախատեսված է Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №519-Ն որոշմամբ հաստատված՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) օրինակելի ձևի 5-րդ հավելվածի 6-րդ սյունակով և ԷՄԱ կանոնների 32-րդ կետով,

27) Պայմանագրի օրինակելի ձևի 8-րդ հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ սպառողը պարտավոր է չգերազանցել նույն պայմանագրի №5 հավելվածով սահմանված առավելագույն թույլատրելի հզորությունը, ինչպես նաև բաշխողի (երաշխավորված մատակարարի) հետ համաձայնեցնել առավելագույն թույլատրելի հզորության փոփոխությունը,

28) ԷՄԱ կանոնների 42-րդ կետի համաձայն՝ ակցեպտի վերադարձման՝ նույն կետով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում բաշխողը նույն ժամկետում գրավոր հաստատում է այն և սպառողին տեղեկացնում Պայմանագիրը կնքված լինելու մասին,

29) ԷՄԱ կանոնների 50-րդ կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ պայմանագրում, այդ թվում՝ ակցեպտում, փոփոխություններ կարող են կատարվել գրավոր՝ պայմանով, որ չեն հակասի Հանձնաժողովի կողմից հաստատված և գործող օրինակելի ձևին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին,

30) ԷԲՑ կանոնների 229-րդ կետի համաձայն՝ պայմանագրով (հաշվառման քարտում, ԷՄՇ մասնակցի պրոֆիլում) ամրագրված հզորության փոփոխության դեպքում, եթե չի փոխվում լարման մակարդակը, միացման վճար հաշվարկելիս միացման վճարի հաստատուն ծախսերի մեծությունը չի հաշվարկվում, և միացման վճարը հաշվվում է պահանջվող հզորության և առկա հզորության տարբերության չափը բազմապատկելով փոփոխական ծախսերի մեծության արժեքին,

31) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Մատակարարների պրոֆիլների, ինչպես նաև վերջիններիս հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների

սպառման համակարգերի հզորությունների փոփոխություններն իրականացվել են ԷՄՇ, ԷԲՑ, ԷՄԱ կանոններին ոչ համապատասխան: Մասնավորապես՝

- Մատակարարի հաշվեկշռման խմբում ներառված սպառողի սպառման համակարգի հզորության փոփոխությունը, որը ենթադրում է նաև Մատակարարի պրոֆիլի փոփոխություն, ԷՄՇ կանոնների 89-րդ կետի ուժով պետք է կատարվի այն նույն ընթացակարգով, որով կատարվում է Մատակարարի՝ ԷՄՇ-ում գրանցումը: Նշվածից իր հերթին հետևում է, որ Մատակարարի պրոֆիլում ի սկզբանե ամրագրված յուրաքանչյուր առանձին սպառման համակարգի ակտիվ հզորության մեծությունը փոփոխելու դեպքում ԷՄՇ կանոնների 65-րդ կետի և դրանից բխող 63-րդ կետի 6-րդ ենթակետի ուժով նույնպես պետք է ներկայացվի սպառման համակարգի հզորության նոր մեծությունը հիմնավորող փաստաթուղթը, որպիսին՝ Պայմանագրի օրինակելի ձևի 5-րդ հավելվածի և ԷՄԱ կանոնների 32-րդ կետի համաձայն՝ հանդիսանում է Պայմանագիրը կամ Հաշվառման քարտից արտածված՝ ՀԷՑ-ի կողմից հաստատված փաստաթուղթը: Սպառողի սպառման համակարգի առավելագույն թույլատրելի հզորության ցանկացած փոփոխություն իր հերթին Պայմանագրի օրինակելի ձևի 8-րդ հավելվածի 7-րդ կետի 3-րդ ենթակետի ուժով սպառողը պարտավոր է համաձայնեցնել բաշխողի (երաշխավորված մատակարարի) հետ: Այս առումով, հարկ է ընդգծել, որ սպառման համակարգի հզորության փոփոխությունը ԷԲՑ կանոններով և Պայմանագրի օրինակելի ձևով ամրագրված կարգավորումների համաձայն՝ Սպառող-բաշխող (երաշխավորված մատակարար) հարաբերությունների տիրույթում է և անկախ այն հանգամանքից սպառողը գտնվում է Մատակարարի, թե Երաշխավորված մատակարարի հաշվեկշռման խմբում, նշված ցանկացած փոփոխության համար վերջինս պարտավոր է դիմել ՀԷՑ-ին՝ համաձայն ԷԲՑ և ԷՄԱ կանոնների, ընդ որում ԷԲՑ կանոնների 229-րդ կետով նախատեսված դեպքում նաև վճարելով համապատասխան միացման վճար,

- Ի հակառակ վերը նշվածի՝ Մատակարարների հաշվեկշռման խմբերում գտնվող հետևյալ սպառողների՝ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ», «ԱԼԻՍ 1», «ԱՎԱԼԱՆԺ», «Դարոյնք», «ՖՐԵԾ ՖԻԾ», «Մ ՖԻԾ», «ՄԵՐԱՐԱ», «ՊԱՐ-ԱՐՏ», «ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱԼԿՈ», «ՇԻՆՊԼՅՈՒՍ», «ՇԻՆԱՍ», «ՍՈՒԼԱՎԱ-Տ.Ա.Ս.», «ՏԱ ԳԱԶ», «ՏՐԱՆՍ ԳԱԶ», «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ», «ԷՎ-ՎԱ», «Կելլի և Վիլիամս», «Ավտոգազ-1», «Ավտոգազ-4», «Ավտոգազ-5», «Ավտոգազ-6», «ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» («Հերմոն» սպառող), «Յունիոն», «Մեղրաձոր Գոլդ», «ԼԻԼ ՖԻԾ», «ԴՈԼՈՄԻՏԻ», «Սանսա», «Մասիս

Տոբակո», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Գրանդ Մաստեր», «Գնոմոն», «Մաքս Ֆիշ», «Ա. Ավետյանի ԱՍԱ», «Մետրոպոլ», «Էս Ջի Այ Ինվեստ», «ՍՊԱՅԿԱ», «Վահեթ», «ՍԻԹԻ» («Սիթի Կոմիտաս» սպառող), «Երևան Մոլլ», «777 Տերմինալ», «Ֆիրմա Նյու», «Գուրգեն Դավթյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, անհատ ձեռնարկատեր Կարինե Լևոնի Քոչարյանի, Համլետ Աշխբաբյանի, «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերության, «Տելեկոմ Արմենիա», «Արշալույս» բաց բաժնետիրական ընկերությունների, «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» Հայաստան Հիմնադրամի, «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ», «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ», «Ռադիո», «Պլատինում Սթոուն», «Վիվա Արմենիա», «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, «Ջրառ», «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» («Կոկա-Կոլա» սպառող), «Արարատ ցեմենտ», «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» («Զաարատ Կապան» սպառող), «Յուքոմ», «ՆԱՏՖՈՒԴ» փակ բաժնետիրական ընկերությունների համար 2023 թվականի ապրիլի 1-ից սկսած՝ Մատակարարները, հղում կատարելով ԷՄՇ կանոնների 247-րդ կետին, իրենց սպառման համակարգի ակտիվ հզորության փոփոխության համար դիմել են Շուկայի օպերատորին՝ կցելով Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ միակողմանի՝ ՀԷՑ-ի կողմից չհաստատված ակցեպտների պատճենները, որոնց՝ ՀԷՑ-ի կողմից հաստատումը ԷՄԱ կանոնների 42-րդ և 50-րդ կետերի պահանջ է: Շուկայի օպերատորն իր հերթին, նշված հայտերը ԷՄՇ կանոնների 65-րդ կետի համաձայն, ԷՄՇ կանոններին անհամապատասխանության հիմքով մերժելու փոխարեն, ընթացք է տվել դրանց: Ավելին, ՀԷՑ-ի կողմից մի շարք սպառողների մասով ստանալով մերժողական պատասխան, այդուհանդերձ, Մատակարարների պրոֆիլներում կատարել է համապատասխան փոփոխություններ: Ինչ վերաբերում է ԷՄՇ կանոնների 247-րդ կետով նախատեսված բացառությանը, ապա Հանձնաժողովը հայտնում է, որ դա վերաբերում է միայն էլեկտրաէներգետիկական շուկայի մրցակցային հատված դուրս եկած՝ Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված այն սպառողներին, որոնք գտնվում են շուկայի մրցակցային հատված դուրս գալու պահից սկսած առաջին տարում՝ հնարավորություն տալով վերջիններիս հստակեցնել, ուղղել, ճշգրտել իրենց սպառման համակարգերի հզորության մեծությունները, հաշվի առնելով այն, որ պատմականորեն ՀԷՑ-ի հաշվեկշռման խմբում գտնվելու ընթացքում, շատ դեպքերում չունենալով օբյեկտիվ իրողությանը համապատասխան ամրագրելու որևէ ազդակ, դրանք սահմանվել են որպես կանոն բարձր մեծություններով:

Հետևաբար, նշված կարգավորումը նախատեսված է ոչ թե որպես ԷԲՑ կանոններով և Պայմանագրի օրինակելի ձևով սահմանված կարգավորումներից բացառություն, այլ ԷՄՇ կանոնների 176.3-րդ կետով նախատեսված կարգավորման բացառություն՝ հնարավորություն տալով Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողներին իրենց սպառման համակարգերի մեծությունները փոփոխելու մտադրության դեպքում, պահպանելով գործող կարգավորումները, շուկա դուրս գալու առաջին տարվա ընթացքում դրանք կատարել ամսական կտրվածքով, ի տարբերություն Մատակարարների հաշվեկշռման խմբերում գտնվող այլ սպառողների կամ որակավորված սպառողների, որոնք այդ իրավունքից կարող են օգտվել միայն սակագնային տարվա սկզբում:

Արդյունքում՝

- Շուկայի օպերատորի կողմից չի ապահովվել ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 6-րդ ենթակետով, 65-րդ և 89-րդ կետերով սահմանված պահանջների կատարումը,
- 2023 թվականի ապրիլի 1-ից սկսած Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների փոփոխությունները կատարվել են ԷԲՑ կանոնների 31-րդ գլխին և ԷՄԱ կանոնների 7-րդ, 9-րդ և 10-րդ գլուխներին ոչ համապատասխան:

Հաշվի առնելով վերը նշվածը և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՄՇ կանոնների 63-րդ կետի 6-րդ ենթակետով, 65-րդ և 89-րդ կետերով սահմանված պահանջների խախտման համար Շուկայի օպերատորին նախազգուշացնել:

2. Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողներ՝ «ԱԲՈՒ-ԼԱԼԱ», «ԱԼԻՍ 1», «ԱՎԱԼԱՆԺ», «Դարոյնք», «ՖՐԵՇ ՖԻՇ», «Մ ՖԻՇ», «ՄԵՐԱՐԱ», «ՊԱՐ-ԱՐՏ», «ՇԱՀՈՒՄՅԱՆ ԱԼԿՈ», «ՇԻՆՊԼՅՈՒՍ», «ՇԻՆԱՍ», «ՍՈՒԼԱՎԱ-Տ.Ա.Ս.», «ՏԱ ԳԱԶ», «ՏՐԱՆՍ ԳԱԶ», «ԵՂԻՑԻ ԼՈՒՅՍ-ԲՀ», «ԷՎ-ՎԱ», «Կելլի և Վիլիամս», «Ավտոգազ», «ԷԼԵԳԻՍ Հ.Է.Կ.» («Հերմոն» սպառող), «Յունիոն», «Մեղրաձոր Գոլդ», «ԼԻԼ ՖԻՇ», «ԴՈԼՈՄԻՏԻ», «Սանսա», «Մասիս Տոբակո», «Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ», «Գրանդ Մաստեր», «Գնոմոն», «Մաքս Ֆիշ», «Ա. Ավետյանի ԱՍԱ», «Մետրոպոլ», «Էս ՋԻ Այ Ինվեստ», «ՍՊԱՅԿԱ», «Վահեթ», «ՍԻԹԻ» («Սիթի Կոմիտաս» սպառող), «Երևան Մոլլ», «777 Տերմինալ», «Ֆիրմա Նյու», «Գուրգեն

Դավթյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, անհատ ձեռնարկատեր Կարինե Լևոնի Քոչարյանին, Համլետ Աշխբաբյանին, «ՇԻՐԱԿ» ջրօգտագործողների ընկերությանը, «Տելեկոմ Արմենիա», «Արշալույս» բաց բաժնետիրական ընկերություններին, «ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ» Հայաստան Հիմնադրամին, «ԱՆԻ ՊԼԱԶԱ ՀՈԹԵԼ», «ԵՐԵՎԱՆԻ ԳԱՐԵՋՈՒՐ», «Ռադիո», «Պլատինում Սթոուն», «Վիվա Արմենիա», «ԴՎԻՆ» ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ, «Ջրառ», «ԿՈԿԱ-ԿՈԼԱ ՀԵԼԼԵՆԻԿ ԲՈԹԼԻՆԳ ՔԱՄՓՆԻ ԱՐՄԵՆԻԱ» («Կոկա-Կոլա» սպառող), «Արարատ ցեմենտ», «ԿԱՊԱՆԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ» («Հաարատ Կապան» սպառող), «Յուքոմ» և «ՆԱՏՖՈՒԴ» փակ բաժնետիրական ընկերություններին՝ ԷԲՑ կանոնների, ԷՄԱ կանոնների և Պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան յուրաքանչյուրն իր սպառման համակարգի հզորության մեծությունը ճշգրտելու համար՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում դիմել ՀԷՑ-ին՝ ամրագրելով 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահը կատարված՝ իր սպառման համակարգի հզորության մեծության փոփոխության ամսաթիվը, իսկ փոփոխությունների դեպքում՝ ընտրելով դրանց ամսաթվերից որևէ մեկը:

3. ՀԷՑ-ին՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված ժամկետի ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում Շուկայի օպերատորին և Հանձնաժողովին ներկայացնել սույն որոշման 2-րդ կետում նշված սպառողների հզորությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ նշելով՝

1) դիմած սպառողների մասով՝ հզորության ճշգրտված մեծությունը և ճշգրտման ամսաթիվը,

2) չդիմած սպառողների մասով՝ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացված հատված դուրս գալու պահի դրությամբ վերջիններիս՝ ՀԷՑ-ում ամրագրված հզորությունների մեծությունները:

4. Շուկայի օպերատորին՝

1) սույն որոշման 3-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում՝

ա. Մատակարարների հաշվեկշռման խմբերում ընդգրկված սպառողների սպառման համակարգերի հզորությունների մեծությունները համապատասխանեցնել ՀԷՑ-ի կողմից սույն որոշման 3-րդ կետի համաձայն ներկայացված տեղեկատվությանը,

բ. ԷՄՇ կանոնների 176.1-ին և 176.3.2-րդ կետերի համաձայն՝ սույն որոշման 2-րդ կետում նշված սպառողների նկատմամբ իրականացնել հաշվեկշռման և հաճախականության կարգավորման նպատակով երկրորդային և երրորդային պահուստի ապահովման ծառայության դիմաց վճարվող հզորության վճարի և դրա վերահաշվարկի ճշտում՝ համաձայն սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխանեցված տեղեկատվության և հաշվարկային ամսվա համար ներկայացվող վճարման ակտի հետ միաժամանակ ներկայացնել ճշտվող ժամանակահատվածի համար հաշվեկշռման խմբի պատասխանատու Մատակարարին.

2) սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պարտավորության կատարումից հետո մեկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն՝ սույն կետի 1-ին ենթակետով սահմանված պարտավորությունների կատարման վերաբերյալ:

5. Առաջարկել մատակարարներին՝ ապահովել սույն որոշման 2-րդ կետում նշված՝ իրենց հաշվեկշռման պատասխանատվության խմբերում ընդգրկված սպառողների՝ սույն որոշման մասին իրազեկումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:

7. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի օգոստոսի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱԳԲԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
КОМИССИЯ ПО РЕГУЛИРОВАНИЮ ОБЩЕСТВЕННЫХ УСЛУГ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
PUBLIC SERVICES REGULATORY COMMISSION OF THE REPUBLIC OF ARMENIA
"02581504"

ք. Երևան
24 հուլիսի 2024թ.

27/108

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.3-Մ4-9/3433-2024պ/տ

ՀԱՅԱՍՏԱՆ ARMENIA
ՀԱՐԿ ՉԿԱՆՁՎԱԾ Tax percue HAYPOST

L0123732970AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ CN15
RETURN

- [ ] Անհայտ/ Unknown
- [ ] Մերժված / Refused
- [ ] Տեղափոխված/ Gone away
- [x] Չի պահանջվել/ Unclaimed
- [ ] Թերի հասցե/ Insufficient address
- [ ]

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date

«Էներջի Սփփլայ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ 1 ՆՐԲ. տուն15

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA
YEREVAN
27 JUL 2024
ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԵՎԱՆ

ARMENIA
YEREVAN
25 AUG 2024
ՀԱՅԱՍՏԱՆ
ԵՐԵՎԱՆ

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«Էներջի Սփփլայ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
ԲԱՂՐԱՄՅԱՆ 1 ՆՐԲ. տուն15

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

- ☐ Առաջնային նամակ/ Priority letter
- ☐ Հրատարակչություն/ Printed paper
- ☐ Ծանրոց/ Parcel
- ☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

- ☐ Պատվիրված/Registered
- ☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
- ☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO123732970AM

- ☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

- ☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
- ☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

- ☐ հանձնվել է/ delivered
- ☐ վճարվել է/ paid
- ☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

AL0123732970AM

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.3-Մ4-9/3433-2024պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA YEREVAN
29 AUG 2024
ARMENIA YEREVAN
27 JUL 2024